# ԱԼԱՇԿԵՐՏԻ

## ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Գրիգոր ք. Նժդեհեանց.

### Ա. ԵՐԳԵՐ.

#### ԴԱՆ-ԴԱՆՆԵՐ.

Ջա՜ կճատ մեղու,
Ջա՜ կճատ մեղու,
Դու քու կճատ թեւեր վերու
Սարից սար ես էրթըլու
Սալամ կաքաւ բերելու։
—
Թոլի, թոլի, թացոցեմ,
Սեւ հաւու միս կերցուցեմ,
Կարմիր գինի խմցուցեմ,
Ծառի հովին քնցուցեմ։
—
Էլի, կանի, աղջա.
Պապու ծառներ կանաչ ա,
Մէկնա հըղի, մէկ թըղի *)
Մէկ Աստուած պահա քըղի։
Թոլի, թոլի, եղւընիկ.
Աւազանի ծիծըռնեկ,
Խաչ-պատուհան կուտ կէրե,
Աւազանի ջուր խմե։
Տա՜ն էնեմ, տունա՜ն էնեմ [1])
Ղօչ-ղառներ մատաղ էնեմ,
Ոսկրներ չարտար էնեմ,
Մէջ նողեր քըկեթ [2]) կէնայ
Էլէք, տէսէք, ո՞ն [3]) էկաւ,
(Սաթէնիկ) խանումն էկաւ,
Ու ձին տակն էր խաղէլին,
Նխշուն օդէն աւէցէք,
Խալի-խալիչէն փռէցէք,
Սաթօն [4]) վրէն նստուցէք,
Էրաղ, գինին խմցուցէք,
Ծառի հովին քնցուցէք։
Մեզի կօկօլ ճիտ [5]) մի կեր [6])
Տանքէ տանեք ժուռ կիգէր,
Բարով իրկուն տուն կիգէր։
Էլի, տէսիմ [7]) բաժ [8]) ինչ վէլայ [9])
Ջայրիկ էրթայ քաղքէն բէրայ
Ջօջիկ կտրայ, նանէն կարայ,
Սաթօն հագնի, բարով վէլայ։
—
Աղբէր, աղբէր, ես քե շուն.
Ի՞նչ ես բարձե վըր իշուն,
—Խունկն ու հինէն, արպըշում
—Վի՞ր կը տանիս,
—Տղէպին (բղէգ)
—Տղէգ եւտ սարերուն,
—Բուրդ կը դդայ դէլէրուն,
—Արջկան մանայ հաւքերուն
—Ճըլվար գործայ ճըժերուն [10]).

*) Կամ.—մէկն ա ընձի. մէկ քըղի.
[1]) Տ—ն, տ—ն—ն ընել—խաղցնել, երգել։
[2]) անհասկնալի, թերեւս աղաւաղուած բառ մը։

[3]) ով։ [4]) Ս—բ—ն—ի—ի կրճատումը։ [5]) աքաղաղ։ [6]) կար։ [7]) տեսնեմ։ [8]) հասակ։ [9]) վայելուչ։ [10]) տղոց.

### Ա. Զրնճլիկ *).

Զրնճլիկ [1])
Գար զրնճլիկ.
Թուր ու Թրվանք
Մորէ կապանք,
Ա— պտէ. [2])
Ա— ճտէ [3])
Կուզ [4]) մարգարէն
Կողդ ի խԹէ

### Բ. Մաշա.

Մաշա-մաշա,
Կրակի մաշա,
Խօխան էկաւ
Քեռ Թամաշա.
Մանքի տկէն,
Ջուր մի կէրԹայ,
Ոսկի քխաւ
Անտէր քարին
Դուս էկաւ
Կարմիր արին։

### Գ. Կօպալ.

Կօպալ-կօպալ, [1])
Իփէ [2]) կօպալ
Հէրասա, [3]).
Մէրասա,
Նակոտ [4]) Թալեց, [5])
Դուս Թալեց։

*) 7—8 տարեկան երեխայ մը փոքրիկին ձեռքէն կը բռնէ, կ'երգէ այս երգերէն մին և մատը անոր կողքերուն կը զարնէ։

1) ՃղԹայ, կամ շղԹայաձև. 2) Այս՝ պտէն. 3) Այս՝ ճտէն (Թերևս անուն). 4) Սապատող։

1) Գնդաձայր ձեռափայտ. 2) Թել ունեցող. 3) Անհասկանալի. 4) Ճուն. 5) Զգել։

### Դ. Էկէ-դուկէ.

Էկէ-դուկէ [1])
Տըմըզա.
Զալան չուկէ
Գուպուզայ. [2])
ՄախԹէ կոճակ,
Դամ պլօճակ, [3])
Ճան, [4]) ճուկ [5]).

1) Անհասկնալի։ 2) ոտքերու վրայ նստել։ 3) օդալից փամփուշտ։ 4) մէկ։ 5) վէգի կանգնելը։

### Ե. Ղօչ-ղօչ.

Ղօչ-ղօչ,
Իմ ղօչ յո՞ւր ա. [1])
—ՄորԹի կէրայ.
Իմ փայ յո՞ւր ա.
—Դրի Թարէք
Գացի ջրի, էկայ,
Կատուն կէրէր էր։

1) Ո՞ւր է։

### Զ. Ղօչ-ղօչ.

Ղօչ-ղօչ, էս ի՞նչ ա.
—Եղ ու մեղր ա
—Յու՞ր [1]) ես բերե.
—Քաղքէն.
—Ո՞ւր կը տանես,
—Մեր տուն.
—Ի՞նչով կ'ուտես.
—Իմ ղօլ [2]) գդլով,
—Դո՞ր [3]) ա ղօլ գդալ.
—Պաղե [4]), կորե։

1) Ո՞ր տեղէն։ 2) պոչ չունեցող։ 3) ո՞ւր է։ 4) ինկեր կորսուեր։

### Փշօ-փշօ *).

Փշօ՛, փշօ՛ վե՞ր [1]) կատուն ես.
—Աղա-բէկին.

*) 6—8 տարեկան երեխաներ ձեռքերնին քով քովի դրած՝ կ'երգեն և վերջին խօսքէն յետոյ՝ իրենցմէ մեծը ձեռքը կը վերցնէ և փոքրագոյնի ծոցը կը տանի, զանի խնդացնելու։

1) Որո՞ւ։

—Ի՞նչ կը ժողվես,
—Սեր ու մածուն.
—Վի՞ր կը տանիս,
—Իմ ձրգէրուն.
—Ձըգեր տո՞ր [1]) են,
—Քօշկի տանիս,
—Ի՞նչ ա փտած տակ,
—Եօրղան դօշակ.
—Փշթա՛, կորի։

## Ճ ի ւ ո ւ ճ ի ւ *).

Ճիւ ու ճիւ [1]).
Ագռաւու ճիւ,
Ագռաւ գնաց
Երուսաղէմ,
Բուրդ էրեր, [2])
Բամբակ չ'եբեր,
Ճալ էրայ [3]).
Ճըլվար չէրաց
Ճնճղուկ թռաւ
Էնայ ծօցօն [4])։

## Խ ա Շ ա Շ ա Շ **).

Դիզրանք [1]) դէզ էր, խանաճան,
Պաղչէդ ըռէզ [2]) էր
Էդ ինչ ա կուտիս,
—Բրդուճ մի լոռու միս

[1]) ճուր։

*) 6—8—10 տարեկան տղայք իրենց բութամատերով և ցուցամատերով միւսի ձեռքի վերին կողմէն, մորթը կը բռնեն, և երկցագոյնը կերգէ և ձեռքը վար առնելով փոքրագոյնը խնդացնելու համար՝ անոր ծոցը կը տանի շտապով։

[1]) Ճնճղուկ։ [2]) բերաւ։ [3]) հրաւ (գործել)։ [4]) ծոցը։

**) Երկուքէ աւելի աղջիկներ 8—12 տարեկան, փոքրիկի ձեռքէն կը բռնեն և կերգեն։

[1]) Խոտի դէզեր։ [2]) մէկ կարգի վրայ։

Կտոր մի թալ դէս [3])
Տանիմ հիւընդիս
Հիւանդս խռով
Խընձ [4]) Վանայ փաշէն
Թափած Թամաշէն.
Դեղ ունիմ, դեղ դիր չունիմ,
Ակ արպըշում աղուխս ունիմ,
Էլայ, Նստայ ծառի ճղի.
Աչքեր դեղի, ընքներ [5]) քաղի.
Չալապու հոգին հանի,
Չալապին իմ հօր մշակ,
Գնաց, քաղեց փունջ մանուշակ,
Բերեց թալեց եօրղան դօշակ,
Նստայ վրէն խանըմնակ,
Ծամեր յուստկի քրդէնակ [6])
Թալի փինիս [7]) Թուրքէնակ [8])։

## Տ ի դ օ խ ի կ.

6—7 տարեկանէն մինչև 10—15 տարեկան տղայք իրենց ձեռքերը քով քովի կը շարեն մէկի ծունդի վրայ շրջանակաձև, ձեռքի ափը վար և երեսը վեր ընելով։ Երկցագոյնը մատով միւսներու ձեռքերը համրելու ձևով կ'երգէ.

Տիտօխիկ. [1])
Տիտմալօխիկ, [2])
Ջուռնաթողիկ,
Էփայ գաթայ
Ու կուլիչայ, [3])
Եղն ի վէրէն
Կը պճպճայ.
Ուտայ էնայ,
Խմայ էնայ
Քաշայ էնայ

և խուրաքանչիւր «քաշա էնայ» ըսելով, այն ձեռքը մէջտեղէն դուրս

[3]) ձգէ այս կողմ։ [4]) ի՞նձ... (քան զ...) =չափ։ [5]) յօնքեր։ [6]) քիւրդի պէս։ [7]) ձգել ուսի վրայ։ [8]) Թուրքի պէս։
[1]), [2]), [3]) անհասկնալի։

կուգայ։ Այսպէս շարունակաբար, մինչև մնայ միայն մէկ ձեռք։ Այն ատեն երգողը այդ ձեռքը կը վերցնէ, ցուցամատը և ճկուխթը եւ դարձնելով կը բռնէ, ափը վեր ընելով, և կըսէ, տրորելով ափին մէջը․

Զու-ձու, ձըւազեղ.

Սբբ-Կարապետուց մաղթած զեղ Ափին մէջ երևակայական ձուածեղը պատրաստ է, հիմայ կը հարցնէ

—Վ՞ր տուն ես քնե.

—(զոր օր.) Կարապետին, կը պատասխանէ․

—Խսայ՝ Կարապետ, (միջամատով անոր ճակտին զարնելով),

—Խսայ՝ ուր կնիկ.

—Խսայ՝ ուր տղէն.

—Խսայ՝ ուրջիկ.

—Խսայ՝ կով,

—Խսայ՝ կթող,

—Խսայ՝ շուռ դ՛ուր փողոց. (բռնուած ձեռքի ձուածեղը անոր երեսին թափելով և գլուխը չետ մղելով)։

Վա՛յ այն տղային, որ սխալմամբ «վ՞ր տուն ես քնե» հարցման բազմանդամ ընտանիքի անունը կուտայ։

## ՏԱՆՂԵԱՆ ՏՕՆԻՆ.

Ծնծացէք, ուրախացէք, ալէլուեա.
Խսօր ծնունդն ա Մայրամին
Մայրամ գնաց դուռն ի չէրին [1])
Ծնաւ բերեց զուր խաչ-որդին,
Խաչ-որդին չէջմիածին.
Երուսաղեմ նոր շինեցին,
Շինեցին թամամեցին,
Սուն մ՛ ու գերան մ՛ պակսեցուցին
«Իմա՜լ [2]) էնենք, իմա՜լ չ՛էնենք
Քառսուն փէտատ, քառսուն կացին,
Առնենք էրթանք ծառ խնկենին.
Առջին կացին որ զարկեցին
Ծառն օրօրաց, ճղեն երաց,
Միջին կացին որ զարկեցին
Ծառն չուր օտաց արուն բօխաց [3]),
Ցէտին կացին որ զարկեցին
Ծառն որոտաց գետին ընկաւ.
«Բերենք լծենք Սերամ, Սրգամ»
Սրգամ չ՛գնաց խըդ Սերամին
Սիրամ գչ՛օք գէտին էգար.
«Իմա՜լ էնենք, իմա՜լ չէնենք,
Ուրֆա քաղաք պառւու մօզիկ
Նո՛ւգայ հարիր, տըւէք հազար.
Թուխս աչքերու խաթրի համար
Բէրէք լծէք խըտ Սերամին»,
Առջին ջուխտ որ զարկէցին
Սիսն ու Մասիս սարն ընցուցին,
Միջին ջուխտ որ զարկէցին
Սև ու սիւտակ ծովն ընցուցին.
Ցէտին ջուխտ որ զարկէցին
Դուռ տաճարին կանգնեցուցին.
Ու-ֆու-Պու [4]) ուրխըցուցին։
Էրնի՛կ ա քե բանցր օրօրոց
Քրիստոս մըջ քե օրօրեցին.
Երանի՛ քե բուրդ խանձարուր
Քրիստոս ի քո մէջ դրեցին.
Երանի՛ քե գետ Յորդանան
Քրիստոս մըջ քե մկրտեցին.
Երանի՛ քե սըրբ-Յովանէս
Քե Քրիստոսին քաւոր էրին.

(Բարի՛, բարի՛, ձեր տղի անուն ի՛նչ ա, կը հարցնեն երգողները)։

— (Արսէն), կը պատասխանեն տնեցիները։ Արսէն հեծեր պօլատ [5]) քուռակ.
Վռչամ [6]) թօրկեր պուրակ-պուրակ [7]).

---

[1]) Այր, քարանձաւ

[2]) Ի՛նչպէս։ [3]) բղխել։ [4]) օրմնադիր։ [5]) կարճ պոչ։ [6]) ծամ։ [7]) փունջ-փունջ։

Մէջքըն ա գարկեր պօղպատ ուրագ,
Արշէն ունի գոմ մի ոչխար.
Գոմ ոչխըրրի պճեղ ոսկի.
Արշէն ունի թալվաց [5]) գըմէշ.
Թալվաց գմշու կոտոշ ոսկի.
Տան տիկին, տիկին, տիկին.
Սօլեր հագի թխկ-թխկալին.
Գնա, կայնի, դուռ մառանին.
Զ'ուզինք քինէ ձին ու ջորին.
Կ'ուզինք քինէ մըջի մէկ քիչ...
Գղալ մի եղ, բուռ մի չամիչ.

Սիրոյ երգեր.

I.

Գիշերուօրէ դուս էլայ
Թաթախ ձընիկ մ'էր եկե [1]).
Բոպիկ հէտիկ մ'էր գացե.
Առաջ զէն հետն ու գացի
Գացի ու պաղչէ մ' իջայ.
Աղպալըսաց [2]) էն էրե [3])
Պաղչի փշին էն փռե.
Ղալմով [4]) փոզպատ էն քաշե.
Առտղուն կոճակ էն դրե.
Նարինս ի պաղչէն քուն էր.
Ուր փալի բարձ գլխուն էր.
Ոչ քուն էր, ոչ չարթուն էր.
Բարձի տըկէն հոտ էկաւ.
Վէրցի, տէսայ խնձոր մ'էր.
Խնձորի կէս խածուկ էր.
Զորս կօշէն [5]) արծըթուկ էր.
Քնէր ես, քրտնէր ես.
Բեր պագեմ կարմիր էրես.
Վախէնամ խռովէր ես.

***

Գիշերուօրէ դուս էլայ.
Թուխ ամպ անուշ կը ցօլէր.
Ցօլա, ցօլալուդ ղուլ [6]) եմ.

[8]) Գոմ.

[1]) Եկած էր. [2]) հարսանիքէն առաջ հարսի և փեսայի հագուստները լուանալը. [3]) բրած էին. [4]) գրչով. [5]) անկիւնը. [6]) ծառայ.

Սարէրու դասթակիվ եմ.
Նախըր գընէն ուռի ծառ.
Խնձոր թալեմ, արի տար.
Խնձորի կէս խածուկ էր,
Զորս թարաֆ արծըթուկ էր.
Մէրիկս ուզեց, չը տըվի.
Խէրիկս ուզեց, չը տըվի.
Աղբէրս ուզեց, չը տըվի.
Նարիկս ուզեց, բախշեցի.
Ես գեղէն չեմ, ղարիպ եմ.
Տոր կ'երթամ, հոն թաղեցէք,
Նարօջս դըռնով ընցուցէք.
Նարիկս ղանչէք, [7]) դուս հանէք,
Տասթմալ մէջքէն քաշեցէք.
Թուխ-թուխ աչքեր սրբէցէք.

Լուսնակ.

Մէռիմ քըզի պզտիկ լուսնակ
Ցօրէն կ'էրթաս մինակ մինակ,
Ծառ մ' եմ տնկեր քե նմանակ.
Բռներ խաղող, սև ու սիւտակ,
Երթանք ժողվենք կողվըներով
Բերենք բռնենք կարսըներով,
(Նունուշն) ուտայ ուր թոռներով.

***

Զարդըրուար, էկար պաղէրուց,
Մանիշակ քաղեր բըլերուց
Անուշ հոտ էկաւ ձէռնէրուց,
Ասըմներ շարեց քարուպըրէ
Եխան [1]) չանատակ [2]) ծովերուց.
Ծամեր չուստըկեց, ըըընդեց,
Ի՞նչ պակաս օսկի թելերուց.
Աղջիկ մի կար չՆրապըստանէն
Ջագէր էր թուխ-թուխ մազեղէն,
Վրէն քաշէր էր շարեղէն,
Սողոմոնի կշտնէն ընցէր էր,
Սողոմոնի սիրտ վրէն ճըլէր էր.

[7]) Կանչել.

[1]) Հանեց. [2]) անչատակ.

Լուսեղէն թագ գլխէն գացեր էր։
Ասայ-մէրիկ, մէրիկ, էնքան կը զանեմ [3]) գլխուս,
Զուր [4]) խաւարիմ ես,
Խրնճ յառ էջ Ադամայ որդին էլ յուստի բերես.

***

Պոեր եկաւ ուսուն, ուսուն.
Պոէրի տուն տըսւերկու սուն,
Ես մայիլ եղայ [1]) քու տեսուն
Դէհ Պոեր, նա՜ նա՜ Պոեր.
Խռովեր տուն չ՚մտեր։
Պոեր նստեր վիլակ կէնայ,
Մեկ Աստըծուց դիլաք [2]) կէնայ.
Երիկ մեռի, սիրող ենայ.
Դէհ Պոեր, նա՜ նա՜ Պոեր,
Խռովեր, տուն չ՚մտեր։
Մեր տան էտև արտ կորընկան,
Ձեր տան էտև արտ կորընկան.
Պօլուկ-պօլուկ [3]) միջով ընցան
Պոեր նե [4]) էր չը ճանչցան։
Դէհ Պոեր, նա՜ նա՜ Պոեր,
Խռովեր տուն չ՚մտեր։

Պ ա ր ե ր գ ե ր

Ա.

Զըմ ու չըմ, չըմ կանայ խաղայ
Ծամէրուս ծանտրութէնէն։
Ծամէրուս ծանտրութէնէն՝
Կաքաւն ինե [1]) բուն էր դրե.
Սաչ պաղիս չընկ-չընկալէն
Կաքաւն առաւ ձագեր թռաւ։
Կաքաւն առաւ ձագեր թռաւ,
Ծամ թել կտրաւ ծովն պատաւ [2])
Ի՞նչ ու ի՞նչ տամ լողւորին
Որ հանայ ծամ-թելն ի ծովէն։

—Լօղւորի մէկ լէ ես եմ,
Զըմ հանե ծամ-թելն ի ծովէն։
Գլխուսի թափէն [3]) կխտամ,
Որ հանայ ծամ-թելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Զըմ հանե ծամ-թելն ի ծովէն.
Գլխուսի ոսկիք կխտամ
Որ հանայ ծամ-կապն ի ծովէն.
—Լողւորի եայն։
Երէսխս ըըֆը [4]) կխտամ
Որ հանայ ծամ-թելն ի ծովէն.
—Լողւորի եայն։
Վզիսի վզնոց կխտամ
Որ հանայ ծամ-կապն ի ծովէն.
—Լողւորի եայն։
Սրտիս պօղմանճուկ [5]) կխտամ
Որ հանայ ծամ-կապն ի ծովէն,
—Լողւորի եայն։
Ձեռացս արպընճան կխտամ,
Որ հանայ ծամ-թելն ի ծովէն.
—Լողւորի եայն։
Քըթեսի խըզեմ [6]) կխտամ
Որ հանայ ծամ-կապն ի ծովէն։
—Լողւորի եայն։
Անկըճխս գնդեր կխտամ
Որ հանայ ծամ-թելն ի ծովէն։
—Լողւորի եայն։
Մատեսի մատնիկ կխտամ,
Որ հանայ ծամ-կապն ի ծովէն։
—Լողւորի եայն։

Բ.

—Ա՜յ աղջիկ աղջիկ ճամպազի աղջիկ,
Մէկ դուռ դուռ էլէ գլուխըջ տեսնեմ։
—Ա՜յ տղա՜յ տղա՜յ, տօ՜ հարամզադայ

[3]) կը զարնեմ։ [4]) մինչեւ
[1]) հիանալ։ [2]) աղաչանք։ [3]) խումբ-խումբ [4]) նե=(ներսի կրճատումը=մէջ)։
[1]) Մէջ (ի ներքս)։ [2]) ինկաւ։
[3]) Գլխի արծաթէ թասը։ [4]) երեսէն կախած արծաթէ զարդ։ [5]) սրտի արծաթէ զարդ։ [6]) քթի օղ (ոսկի կամ արծաթ)։

Մղրախ [1]) չեմ առե, ռըմթօփ [2]) չեմ
տեսե։
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, խօրօտիկ աղ-
ջիկ,
Մէկ դու դուս արի ճակատղի տես-
նեմ։
—Ա՛յ տղա՛յ, տղայ, տօ, քըրդու տղայ
Քաղաք չեմ գացե. Մէյդան [3]) չեմ
տեսե։
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, ճամպադի՛ աղջիկ.
Մէկ դու դուս էլի, քու քիթ ես
տեսնեմ։
—Ա՛յ տղա՛յ տղայ, տօ հարամզադայ
Ընճպար չեմ եղե. սխեռ չեմ տեսե։
—Ա՛յ աղջիկ աղջիկ խօրօտիկ աղ-
ջիկ.
Մէկ դու դուս արի, բերանղի տես
նեմ։
—Ա՛յ տղա՛յ, տղա՛յ, սատանի տղայ,
Քաղաք չեմ գացե, ֆինճան չեմ
տեսե։
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, պճճելիկ [4]) աղջիկ,
Մէկ դու դուս էլի, ակռէքդ ի
տեսնեմ.
—Ա՛յ տղա՛յ, տղայ, տօ հարամզադայ,
Քաղաք չեմ գացե, սատաֆ չեմ
տեսե.
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, խօրօտիկ աղ-
ջիկ.
Մէկ դու դուս էլի քու լեզուն
տեսնեմ.
—Ա՛յ տղա՛յ, տղա՛յ, տօ, քըրդու տղայ,
Պաղը չեմ մտե, պլպլու՛ չեմ տեսե։
—Ա՛յ աղջիկ, աղջիկ թութուշիկ
աղջիկ.
Մէկ դու դուս արի, երեսդ ի տես-
նեմ.

[1]) Տէգ. [2]) Տէգի ծայրին կապած մե-
տաքսէ փունջ։ [3]) հրապարակ։ [4]) փո-
քրիկ։

—Ա՛յ տղա՛յ, տղա՛յ, պուպուշիկ տղայ.
Քաղաք չեմ գացե, խնձոր չեմ տեսե։
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, բարալիկ աղ-
ջիկ.
Մէկ դու դուս էլի, ծամերդ ի տես-
նեմ.
—Ա՛յ տղա՛յ, տղա՛յ, կլօրիկ տղայ,
Դուքան չեմ մտե, արպշում չեմ
տեսե.
—Ա՛յ աղջիկ, աղջիկ, դու շատ խօ-
րօտիկ,
Մէկ դու դուս ելի, ծըծերդ տես-
նեմ,
—Ա՛յ տղա՛յ, տղա՛յ, տօ, աղէկ տղա՛յ,
Պօստան չեմ մտե, շամամ չեմ տեսե։

Գ.

Ամպեր էր, հա, ամպեր էր.
Ոսկի թափեց, բանտեր էր.
Դու գնա՛, դու գնա՛, ես կգամ,
Խըտ՝ քու շըքին ես կգամ,
Փարչիկ կըլնամ, [1]) ու կգամ.
Ձան տղէն քնցում, ու կգամ.

Փարչիկ կոտրաւ ջուր գնաց,
Ատալ աղի շորեր մնաց,
Դէհ գնա՛, կգամ, շուտ կգամ,
Կարմիր սօլեր, հագնեմ ու գամ
շուտ կգամ.

Ձան տղէն քնցում ու կգամ.
Առու առու եմ թռե.
Քառսուն կաքաւ եմ բռնե.
Համրով ու թառն եմ դրե.
Դէհ, գնա՛ կգամ, շուտ կգամ Լայն.

Ելայ լուսուն պակաս էր,
Առայ բէրանս՝ լեղի էր,
Թափի գետին՝ գինի էր.
Դէհ, գնա՛, կգամ. շուտ կգամ
Լայն.

[1]) Կը լեցնեմ։

Գ՚ինի, գլինի, գլինըստան.
Աղբըր մ՚ ունեմ շահըստան.
Թուլթա շապիկ կարող էր․
Մանր ուլընկլի շարող էր․
Դէհ գնա, կլոգամ, շուտ կլոգամ,
Խըտ քու շըքլին ես կլոգամ.
Փարչիկ կըլնամ ու կլոգամ,
Ձան տղէն քնցում ու կլոգամ.
Կարմիր սօլեր հագնիմ ու գամ
շուտ կլոգամ.

Դ.

Ջոջ տուն լէն ու էրկէն [1])
Խօրօտ կընէր մեր ճէրկէն [2])
Լէյանէ, հա, լէյանէ.
Գիշեր [illegible] [3]) դուս ելայ.
Թուխ ամպ անուշ կը ցօլայ.
Ցօլա, ցօլալուդ հայրուն [4])
Լէյանէ, հա, լէյանէ.
Կը ցօլէր հալւայ սարին,
Ձատ բարև հեռու եարին.
Քիչ բարև մօտիկ եարին.
Լէյանէ, հա, լէյանէ.
Ա՜յ տղայ, խաղով արէ.
Ոտներդ շաղով արէ.
Մեր Թաղն ղալմաղալ ա,
Դու վերին Թաղով արէ. Լեյանէ.
Զավրն եմ երե վըլացք,
Սապոնս ա ոսկէ ջըրած,
Սապոնս կիւլ ա դառէ,
Լեզուդ պիլպուլ ա դառէ. Լէյանէ

Ե.

Եկար մեր դռնով ընցար մոլորած
Ճերմակ լաջին Թուխ-Թուխ աչքեր
բոլորած.
(Կրկնել խ-րաքանչիւր տան վերջը).

[1]) Երկայն․ [2]) կարգը․ [3]) սխալել․ [4]) ղուրպան․

Կայներ ես պախա-պախա.
Լաջակլի ճոթեր կախ ա,
Քուխտ մի շամամ մըջ ծոցիդ.
Մէկն բեր ընձի ծախա․
Նախըր գընէն ուռի ծառ,
Խնձոր Թալեմ արի տար,
Խնձորի կէս խածուկ էր,
Եարոջ գօտին դըրած էր.
Ծառի տըկլին [illegible] էր.
Եարոջ տեսնալ [illegible] էր.
Ձատ մի ուռի կը պատռես,
Էդ քու սիրած [illegible] [1]) էր․
Ծառի միջին կանանչ էր,
Աղջիկն ընձի ՝կը կանչէր.
Ձէն մի հանա, մարդիկ կան,
Աղջիկ հօրից կամանչէր.
Դռան դէմին կայներ ես,
Արջկան [2]) ձեռքդ մաներ ես,
Քու դարտեր ընձի փառեց,
Ընձի տնէն հաներ ես․
Ընձի կասեն տիրացու,
Խօսքով ընձի մը լացու,
Ախշարք ընձի նահատկեն [3])
Խօսքով ընձի դու իմցու․
Գնտիկ մնտիկ գնտանոց,
Մանտր Թփեր [4]) երսընոց,
Բաց կոճկըներ, գամ քու ծոց,
Ազապ տղին դարտ ու խոց․

Զ.

Նշխուն կաքաւ, իջաւ պարն բոլորաւ.
Տուշմներս պարի մէջն մոլորաւ *).
Աղջի, անունդ ինձ ասա
Փանճարի մէջ քե տէսայ,

[1]) Սրիկայ․ [2]) քայման—բոքս [3]) նախատել․ [4]) արծաթի զարդ․
*) Կրկնել խ-րաքանչիւր տան վերջը․

Աղդ ու տակս [1]) թօփ կ'ենեմ
Քեզի մօրըս հարս կ՚ենեմ.
Տօլմա փաթթի պխպարով,
Նար մի ունիմ քխպարով,
Եար ճան, քեպարիդ ղուրպան
Ճեպերդ լիք նուպարով։
Փասով աղջիկ կար էրա,
Ընձի քըզի նար էրա։
Պաղի տալտով [2]) ես կխգամ,
Ձեռներդ չալտաղ էրա։
Ղարայուլը արտ չունիմ,
Հալըն գինայ տարտ չունիմ,
Տարտն սիրտսի բունը ա.
Ճաշել եմ խապար չունեմ։
Ա՜յ տղայ, արի գնայ,
Ծալիկըլի տուր ու գնա,
Վըլամ, վըլամ, [3]) չ՚խտըկի,
Վարդաջրեմ, խտըկի։
Մերս ընձի բերեր ա,
Ճերմակ փանուճ [4]) էրեր ա,
Փանուճի մէջ ես մեռնենք,
Որ մօրսի մուքից ընկնենք։
Ա՜յ տղայ, հալիր էրա,
Ո՛վըլըրներ չալիրն էրա,
Ձիս որ քըզի չը տըւին,
Դու մերս ղալիլ [5]) էրա։

## Է.

Ես կըսեմ դու խաղա, դիլպար
Քանի ջանդ սաղ ա դիլպար *).
Դու կայներ ես գիմաց գիմաց,
Աչքով կենեմ քըզի իմաց,
Իմ երեսի հայէն [1]) գընաց
Միսս հալաւ, ոսկոռ մընաց։
Դու կը քելես վերի-վերի.

[1]) Աղգականներ։ [2]) ոտներով։ [3]) լըուալ։ [4]) խանձարուր։ [5]) հաւանեցնել։
*) Կրկնել իւրաքանչիւր տան վերջը։
[1]) Ամօթ։

Կրակ ընկեր սիրտս կէրի,
Քըզի չրսեն որբէւերի։
Դու կայներ ես դէմ ամպրոցին
Դու կը խաղաս հըտ վըզնոցին,
Մոշը [2]) եղայ ճերմակ ծոցին։
Դու ելեր ես, կերթաս մարաք,
Թեւերդ երկեն, մեջքդ ա բարակ,
Քու ստելիք սեր ու կարագ,
Քու հացնելիք քե ~~դուշմանու~~ [3])։
Դու ելեր ես կ'երթաս սէյրան.
Դու կը մընէր սարի ճէյրան.
Դու կը քէլես կաքուու նըման,
Քէլէ, քէլէ, պօյիդ հայրան։
Դու ելեր ես, կերթաս պաղչէն.
Կը շընկշընկայ սօլի նալչեն.
Արև զարկեր ճակտիդ թախչեն [4])
Արի երթանք վերի պաղչէն։
Դու կը քէլես կխըլա-կխըլա.
Ծըծերդ մընէր բամբկի քուլայ.
Աչքս ի տեսաւ, սիրտս ի կուլայ։
Դու կը քէլես քուչա-քուչա,
Ծատ խօրօտ ես, խելքդ ի քիչ ա,
Քու ճէպերու կըզեր [5]) փուճ ա։
Դու էլեր ես կ'էրթաս ի կալ.
Ճակտիդ վըրէն կայ ճուխտ մի խալ,
Դու նըման էր չինարի ծառ,
Դու կը լմընէր զօզանի զառ։

## Ը.

Ճան մարալ ճան *)
Գացի գացի հէռէցայ.
Ճան մարալ ճան
Հէռու սարին մօտէցայ.
Ճան մարալ ճան.
Դարտ ու ղամով էրէցայ. [1])

[2]) հկանալ։ [3]) շնորհաւոր։ [4]) Դուքան, հարթ։ [5]) ընկոյզ։
*) Կրկնել ամէն տողի սկիզբը։
[1]) Վշտով այրել։

Ճան մարալ ճան.
Գացի, գացի ճամխու կէս.
Մէջքս կապի ճալպու պէս.
Աչքով կէնեմ, արի տես։
Սարեր ամպեր ձուն կիգայ.
Եար խռովեր տուն չիգայ.
Առանց եարին քուն չի գայ.
Սիրած եարս տուն չիգայ։
Սարեր ձորեր օսեն ա. [2])
Իմ եար օվարի [3]) լուսին ա.
Եարիս հէնձած ալ ձին ա.
Իմ եարս էլ անգին ա։
Առաւօտուն Թունիր բոց,
Կախեց եաշմաղ, Թօրկից պոչ,
Արի եղնենք գիրկ ու ծոց.
Գուցէ [4]) խմրի [5]) տարտ ու խոց։
Տօ տղայ, քու կիւգալ արև,
Ընցար, չը տըւիր բարև.
Չը Թօրկիր սրտիկս ի խոռ
Զուրմի [6]) տարին ի բոլոր։
Քօլօլիկ վէրև դար էր.
Զորս բոլոր հարօր վար էր.
Ըմէնոց քաղցր իմ եարն էր։

Թ.

Խանէ եաման, ճանէ եաման,
Տիլպար եաման, եաման եաման *)
Խանէն կայներ դէմ ամպրոցին.
Խանէն խաղէր հըտ վըզնոցին.
Ես մաշուղ [1]) էնք ճերմակ ծոցին։
Խանէն էլեր կերԹայ ՚ի պէր. [2])
Ո՛չ պէր եղնէր, ոչ պէրի տէր,
Որ գիս չէնէր էս դարտին տէր։
Տիլպարն էլեր, կէրԹայ կաւի.
Սօլեր նեղ էր, ոտներ ցաւի,
Գեղ մի կայներ ուրին դուռ։
Տեղպարն էլեր կէրԹէր կանգառ,
Ծամեր ուստկեր խանգալ-մանգալ,
Ջիս քու սիրուն զարկին չանկեալ։
Խանէ, միգա՛ր, մեր տուն ծուխ ա,
Աչքեր կըԹխա, [3]) ընքներ Թուխ ա,
Տուչէ [4]) փէշեր [5]) բուդուն [6]) պուխ ա [7])։
Տիլպար էլաւ քնաց օղին, [8])
Գնաց կանաւ վերև գեղին,
Կապեր կարմիր, հագեր դեղին
Խանէ եաման, ճանէ եաման ևայլն։

Ժ.

Մեր քարափը քար չկայ,
Ելլի եար.
Եարոջս նման եար չկայ
Պելլի եար *).
Աստղըն անուշ կը ցոլայ. Ելլի եար.
Կը ցօլայ հալւայ սարին, պելլի եար.
Ձատ բարև ղարիպ եարին.
Ցերդիկ, չերդիկ բռներ ես.
Ցերդկի տակ կըներ ես.
Մերս քե աղջիկ չի տայ
Անուշ քունդ ի կտրէր ես։
Ա՜յ տղա՜, կանանչ ոպոպ
Ջէրիք ընցնիս մեր պատով,
Ջէրս քե աղջիկ չի տայ,
Մեր պատ բլաւ քու հապով [1])։
Որդէն կգաս գեղ մտնիս,
Իմ փռած տեղն մտնես,
Ընձէն ղայրի եար բռնես,
Պեմուրատ հողն մտնիս։
Կանանչ արտն հաց տարայ,
Իմ եար տէսայ, յետ դառայ,

[2]) դեղնած։ [3]) աշնան լուսին, որ աւելի փայլուն և գեղեցիկ կ'երևի։ [4]) Թերևս։ [5]) փարատի։ [6]) մինչև։

*) Կրկնել իւրաքանչիւր տողէն վերջ։

[1]) Սիրահար. [2]) Պէր—ոչխարը դաշտը կԹելու երԹալ։

[3]) գաւաԹ. [4]) էնԹարի. [5]) քղանձք. [6]) ամբողջը. [7]) ծոպ. [8]) բանջար։

*) Կրկնել իւրաքանչիւր տողի վերջը։

[1]) Պատճառով.

Խնձոր տըւեց ես չառայ,
Ես ֆինչ անաստուած դառայ։
Իմ քարի տակ կայ շուշայ,
Իմ եարն պանկլի ղուշ ա,
Ո՞ն [2]) ա կըսայ եար գեշ ա,
Խընձ ղանտ-շաքար անուշ ա։
Ճուլստ գուլթան արտ կը բանի,
Ծէկ աղջիկ հաց կը տանի,
Մէկ կերթայ, մէկ կը կանի,
Աղլ ու իման [3]) կը տանի։
Ամպեր ա պուլթա-պուլթա.
Իմ կերած կարմիր թութ ա,
Ես ու դու իրար սիրենք
Թ՚ըղ գեղով ըսին սուտ ա։

ԺԱ.

Հայտէ, պաղչէն, Յակոբ ճան.
Ջար քեամանչէն Յակոբ ճան.
(կրկնել իւրաքանչիւր տան վերջը)
Ծիրան եմ Ծառի Ծիրուն.
Աղջի, եկայ քու սիրուն,
Եկար Ծի [1]) քաղիր տարար,
Ծախեցիր Արաբներուն։
Առաւօտուն թունիր մուխ,
Նաշմաղ զարկիր, թորկիր պուխ.
Իրիկըւան թունիր վառ.
Նաշմաղ կապեր խառ ու մառ։
Պառաւ, հըլա դու հող իս.
Պառաւ, գրօղին մօտ իս,
Դժոխքի մէջ դու մաշիս,
Բռնես փեշէն ու քաշիս։
Մանտր թուփ ա ըռեհան
Ըլէրեմ սարեր սէյրան
Սարերու սուտակիւն եմ,
Պօղոս Պետրոսի քուրն եմ։
Ծաղիկ քաղի մաղերով,
Վերև դրի շաղերով,

²) ճվ. ³) խելք և հաւատք։
¹) ֆնձի։

Էն վախտ քեզի սիրեցի,
Որ եկար մեր պաղէրով։
Զատըր եմ զարկե սարին
Վաղտէն եմ կտրե տարին,
Վաղտէն էկաւ, լըմեցաւ,
Հետ բէրեց խէրն ու բարին։
Աղջի ճրագը լուս տու,
Ճէպիդ չամիչն դուս տու,
Սէրած աղբօրդ խէրուն
Պադ մի կուզեմ, էրկու դու։
Ումրօ, դու օտար եղիս,
Սև հաւու կատար եղիս,
Մուրօն քե աղջիկ չի տայ,
Դու լեղապատառ եղիս։
Կայներես պաղի վրայ,
Չինարի Ծառի վրայ,
Կարմիր ֆասդ ի դրէր ես
Խամփուռ մազէրուդ վրայ։
Ըլայ տանիք, լիք մարդ էր,
Մարաքը զըմեն չարդ էր,
Էն դէխէն [2]) եարս եկաւ
Տէսայ գօտին լիք վարդ էր։
Երիկւան մութն կոխեց,
Դռնէրու շուքն կոխեց,
Էլման [3]) տէսայ իմ եարս,
Խիալ խիալին կոխեց։
Սարերն ման եմ եկե,
Ըւնճէքը ման եմ եկե,
Էկան ըսին, եարդ էկաւ,
Խէլըռած տուն՝եմ էկե։

---

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Կարմիր միզարով [1]) աղջիկ
Գինդ հազարով աղջիկ,
Նխշուն միզար, ղըրմըզ [2])
Պատռիս չըմ առնի քըզի։

²) Այն կողմէն. ³) Նորէն, դարձեալ։
¹) Ֆոգնոց. ²) կարմիր.

Սարի գլխունը ես եմ,
Զկներու կէսը ես եմ,
Քնող քրտնող ևարոջ
Գիշերուան ընկեր ես եմ.
Ժամ շինի կամար-կամար,
Սաւտա [5]) եմ քըզի համար,
Աղջի, Աստուածդ սիրես,
Քե պահձ ընծի համար.
Ձեռդ ի զարկիր մըջ էղին,
Քուն չը տանայ մէջ տեղին,
Օրէն մէկ ոսկի խարճեմ
Երեսդ քսա իմ պէղին.
Եարս պաղչէն քնուկ ա,
Տաստմալ [4]) էրսին փռուկ ա,
Էրի որ պադ մի առնի,
Պագովս զընտան ընկայ.
Զնտան ա, ինչպէս զընտան.
Մէջ վարդ ա բոլոր ռէհան,
Իմ ևարոջ խաթրի համար,
Մէջ ծաղիկ, շարան-շարան.
Տղայ, անունդ Յովանէս,
Սարերը սէյրան կէնես,
Սէյրանիդ քամխուն հայրան,
Դու սիրեր ես դու կառնես.
Քու հագած տէյրէն ալ ա.
Ճակտիդ ի ջուխտ մի խալ ա
Աղջի, սէդան մի կապա,
Քու եարն շատ պէհանջ [5]) ա.
Ջուր փրցեր կիգայ սարէն.
Գայ Թափի մառմառ քարէն.
Որ դառնայ ուր ղրարէն
Հանայ գոտեցուկ եարէն.
Ղալամ ձեռս առեր եմ,
Մընկմր [6]) խօսքէս դառէր եմ,
Ինձի բարև մի ղրկա,
Քու սիրուն ես վառեր եմ.
Պոստան եմ ցանե խերար.

Եարս կորաւ պէղխաթ [7])
Էս ժամանակ չ՚մանցեր ա.
Մարդերու խօսքն ու ղրար.
Մեր տուն ձեր տուն մէկ տառա-
պով, [8])
Եյնենք, իջնենք կանանչ կապով
Ղրար խտանք, ղրար առնենք.
Զիրուր սիրենք, Ավտուածնապով [9])
Եարս կապեր էր քեամար,
Սաւտա եմ քըզի համար,
Իմ եօթ տարուան աշխատանք,
Կը խարճեմ քըզի համար.
Էլնեմ Նարեկ էրթամ ուխտ,
Թըսպեղ [10]) քաշեմ ճուխտէ
ճուխտ,
Կանչեմ զօրաւոր սրբեր.
Իմ՝ ճանանին էնեմ Թուղթ.
Մեր սրախը աւած ա,
Թուները մէջ Թաղած ա.
Ծուտ էրէք, փլաւ էցգեմ [11])
Քանի եարս կայնած ա.
Ջաղցի դռնէն ջուր կիգայ,
Աղբէր քուրոջ հուր կիգայ
Աղջի, ճան, կանչա, լսեմ,
Քանի սրտիս դուր կիգայ.
Ոչխարն եմ էրեր բակը
Դէմ տըւի սէլի ակը,
Եօթը տարի սիրեցի,
Ես ընկայ քու կրակը.
Հաց կը Թխեմ, զարի ա,
Էս ինչ դժուար տարի ա,
Ա՛յ տղայ, ելի բառնանք,
Քանի գործեր արի ա.
Եարս կայներ ա քարին,
Կը խօսայ խէր ու բարին
Կիւզալ կաքաւի նման
Կը կարդայ լուսան [illegible] [12]).

---

[3]) սիրահար. [4]) Թաշկինակ. [5]) վիճակը ծանր է (հիւանդ) [6]) միԹէ.

[7]) [illegible] իմաստով.
[8]) տառապա—տախտակամած. [9]) Աստուծոյ համար ([illegible] իմաստով).
[10]) համրիչ. [11]) էցգել—ձգել (եփել իմաստով). [12]) հով.

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ.

### Ա.

Նաւատուն ելաւ քամին.
Պագըրկան լիջաւ կեամին.
Ես մէռիմ քու զարիպ ճանին։
Արձկեցին փարի հանդուրց,
Ճիկոտ ջոկեցին պապուց.
Ախշըմ', մէրիկ, ախշըմ.
—Ձեմ երթայ, զօրով կը տանեն.
Աղբէր, մի բաժուի, բաժւելու ես եմ.
Ծաղիկ, մի ժաժայ [1]) ժաժելու ես եմ,
Ձեմիկ, մի տնտա, տնդալու ես եմ,
Ղարիպ երկիր երթալ—կորելու ես եմ։
Թիփերով զուռնէն փչեցին,
Քառսուն ճուղ ծամ հուսրկեցին,
Սնձէրի ըշէնը [2]) զարկեցին.
Պօղ ձին դոշին թամիցէն
(Ճուշան) վրէն հէծուցին,
Մանտր ու բէտ սարեր ընցուցին,
Տարան կէսրանց տուն իջուցին։
Եկած էդ դեղի արջեր,
Կը տանեն մեր կանանչ փարչեր.
Եկած էդ դեղի գէլեր [3])
Կը տանեն մեր ոսկի թեյեր.
Վէր ու վէր պատեր փշերով,
Ղազու փոր լցին նշերով,
Մեր կաքաւ տարան գիշերով։

### Բ.

Երեւանայ, հնդստանայ.
Բոլոր երես, կարճլիկ չանոյ. [4])
Էն վախտ որ բերան բանայ.
Ճաքար պխտէր Երեւանայ։
Քու շէկլիկ ծամեր ըսեմ,
Ծալ-ծալ արպըշմի նման ա.
Քու մէյտան ճակատ ըսեմ.
Պագըրկան քոքէն [5]) կը հանայ։

—

## ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ.

### Կ ի տ ո ւ ռ

Կիտուռն եկաւ կեառան-կեառան [1])
Թէրմաշն եկաւ կեառան-կեառան
Ինչ որ տըփինք զէն էլ չառան
Ելան վըր կորէկին թառան։
Հա՛յ կիտուռ, նա նա՛յ կիտուռ
Աստուած զարկայ, կոտրայ քո ճուռ,
Որ գիս չէնէր աւ տալ ու ծուռ,
Ամէկ արտէն քլլե մի տուր։
Եաման կիտուռ զէտ բան մ' էներ,
Մատաթ կիտուռ զէտ բան մ' էներ,
Զիս իմ երկրէն դեղուր [2]) մ' էներ։
Կիտուռն եկաւ Պօտօ կտոր,
Պօտօն ելաւ, ճմռեց զուր փոր
Հատ մի չեղաւ լցէր ուր հոր։
Մէռիմ քըզի սըբ-Յովանէս,
Կիտուռն ելաւ կորեկի կէս,
Խուրձ մի չեղաւ դըրէր ինք դէզ
Որ գեր տեսնէր էդ մեր ըռէս [3])
Երկինք ամպեց, զկիտուռ թափեց,
Թէրմաշ թըթուռ զկորեկ լափեց,
Կօտ մի չէկաւ շահնէն չափեց։
Կիտուռն ելաւ փշի բլին,
Անտէրն ելաւ փշի բլին
Աչքն ա մացեր ա մըջ տըլին [4])
Զկորեկ իրարուց կը ղըլին [5])
Գացէք բէրէք չքաւոր Մատղէն
Թիգայ [6]) զկիտուռ հանայ արդէն
Ես էրէցայ էնոր տարտէն։

---

[1]) Ճարժել. [2]) գառւլ. [3]) գայլեր. [4]) Ծնօտ. [5]) սնանկացնել։

Այստեղ երգւում են նաև այն հարսանեկան երգերը, որոնք տարածուած են նաև Բուլանըխում. (տես մինչէ վերև), ուստի և մենք չկամեցանք կրկնել։

Խմբ.

[1]) Խումբ-խումբ. [2]) կորսնցնել, անհետ ընել. [3]) գլուղապետ. [4]) փէշ—տիղմ. տըլին—տղմին. [5]) խլել. [6]) Թող գայ.

Կիտուռն էլաւ գնաց ի Մուշ.
Կորէկլի հատն էրկու ղուռուշ,
Հատ մի չեղաւ լցէրինք կուժ
Ճժերն ուտին անուշ-անուշ։
Կիտուռն եկաւ, գնաց Հօտեր,
Կէրաւ զկորեկ Թօրկեց չօփեր,
Պաշգեղ լսեց կապեց զԹօփեր։
Հաւար Թալենք [7]) ի Ճուկամեր,
Հատ մի չեղաւ էնինք սամեր [8])
Կիտուռն էկաւ մեր մարքի դուռ
Պալթէն բէրէք կտրենք զուր
ճուռ
Էդ անտէրի տարտն ա մրմուռ։
Կիտուռ գնաց Ումրօ աղբին (արտ.)
Կտրեց զկորեկ Թօրկեց զուր պլին [9])
Կօտ մի չեղաւ, տէնք [10]) սոխի գին։
Մէռիմ քըզի սըբ-Հրնգրան
Մատաղ կտրեմ վըր քո շէման,
Արի զկլիտուռ մեր հողէն հան,
Հաց մի չէղաւ, բրդենք ի Թան
Ճժեր ուտեն, էրթին գուԹան։
Մեռեմ քըզի սըբ-Թուխ-Մանուկ,
Ճուղ-ճուղ կորեկ Թօրկես կայնուկ.
Մէրնիմ քըզի սըբ-Կարապետ,
Երկու տէր-տէր, մէկ վարդապետ
Մատաղ կտրեմ Մարկոսի ճետ
Ժողվա զկլիտուռ, լից Մուրատ գետ,
Խառաբանն խառաբանա [11]),
Տղայ, գնա, կորեկ ցանա.
Զէղնի կլիտուռ քօքէն հանայ
Տօ տղայ Նօրսօ, հօրիկ քշա,
Զալօն կիշ տուր, Պաշօն քշա,
Դարձիր ի յետ զկլիտուռն լիշա,
Գլուխ վէրցու, զԱստուածն կիշա,
Առ զվարոց, զկլիտուռ քշա։
Աստուած բանայ զուր բարի դուռ
Թափայ զգլու զուռ [12]) ժողվայ զԹըլ-
Թուռ
Որ գլխ չէնէր [illegible] [13]) ու ժուռ։

—

## ՄՍԻ ԲՆՃԻՆ

Տօ՛ տնակո՛լ, [1]) տօ՛ տնաւեր,
Թէրմաշ Թուլէն քաղքըցի,
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր.
Մեր տան ճամբախ չը գիցի. [2])
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Պատի [3]) Թունիր իրեցի,
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Միսն ա եղեր բրնձի,
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Փշում' [4]) դնենք վըր կոճին,
Տօ տնակոլ, տօ՛ տնաւեր.
Ճամխենք երԹայ մեր խօճին.
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Փշում' դնենք վըր հօլին,
Տօ տնակոլ, տօ տնաւեր,
Ճամխենք էրԹայ ջօջ-մօլին,
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Փշում' դնենք վըր գաղին. [5])
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Ճամխենք երԹայ Աչվաղին։
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր,
Փշում' դնենք մըջ քասին [6])
Տօ տնակոլ, տօ տնաւեր
Ճամխենք երԹայ Մինասին։
Տօ՛ տնակոլ, տօ տնաւեր,
Փշում' դնենք մըջ փասին,
Տօ՛ տնակոլ, տօ տնաւեր,
Ճամխենք էրԹայ Մալխասին։
Տօ տնակոլ տօ տնաւեր,

---

[7]) օգնուԹեան կանչել. [8]) կորեկի խաշել. [9]) Թեփ. [10]) դայլնք. [11]) անիմաստ.

[12]) կարմրալանջ սարեկ. [13]) ցնդած խելք կորուսած։

[1]) Տնաշէն. [2]) չգիտցեր. [3]) ինկեր. [4]) փշուր մը (կտոր մը). [5]) փշալից բոյս մը. [6]) հողէ պնակ.

Փշում՝ դնենք մըջ կուժին [1])
Տօ տնակոլ, տօ տնաւեր,
Ճամխենք երթայ Մուտուլին.
Տօ տնակոլ, տօ տնաւեր,
Փշում՝ դնենք վըր Թօփին
Տօ՛ տնակոլ, տօ՛ տնաւեր.
Ճամխենք երթայ Յակոբին։

—

ԵՐԿՐԱԳՈՐԾԻ-ԵՐԳ.

Ա.

Գութա՜ն, գութան, Աստուածաբան,
Առինք իջենք հըտ գետափան,
Խունկն ու խէցիկ ճպաւըներուն.
Բալս ու փէտասա հալւորներուն,
Կարմիր խնձոր մանճկըլներուն,
Կանանչ վարոց հոտըղներուն
Ազատ նստեր վըր քարերուն,
Քարոզ կլտայ աղջըկներուն.
«Էկէք, առէք հոտըղներուն։
Առին, իջեն մըջ բըլերուն,
Ղըճու խտան մանճկըլներուն։[1])
Գութա՜ն, գութա՜ն, Աստուածաբան,
Ջարկի լորուն, բարձայ ջորուն,
Տարայ, առայ խունկ արպըշում,
Խունկ՝ պաւըներուն
Արպըշում՝ աղջըկներուն,
Աղջի՜կ, ճան աղջի՜կ,
Պագ մի խտա՜ս հոտըղներուն։
Մեր գութան կծու, կծու,
Իրիցու տուն ինձի ցուցու,

Ջա՛ր շէկ գըմէշ պարկըցու,
Բունմ պոչէն կանգըցու,
Ջարկայ, հանայ հոտըղցու,
Ընուն դնայ հորևորին [2])։
Հորևոր, հորւխ գետին,
Փոշետուն, փոշին գլխին,
Խարզընտուն, խարզան ի ձեռ,
Խնձորտուն, խնձոր գօտին,
Ազապ աղջիկ ուժտընւորին,
Մոտըլտուն, մուկնի բէրան,
Հաց ու պանիր ամոլւորին
Խէրն ու բարին մեր մանճկըլին։

—

Պառաւ էկաւ կուզէկուզ (գճած),
Թևէն կախուկ քասուն կուզ (ըն-
կոյզ),
Ամէկուն երկուս-էրկուս,
Չ՚.քշողին քասուն կուզ։
Գութան կլլայ, գէլ կուգայ.
Գութնի պուղէն կուխ կուգայ.
Ձէկլիկ կոտան կնճակ կուգայ.
Վըր արծըլին, վըր ծարծըլին,
Կիրակմըտին ճիժ վաստըկլին,
Հորևոր, հորւի գետին, ևայլն (որ-
պէս վերը)։

---

[1]) Հողէ փոքր պնակ։

[1]) Բան մը ուրիշին ցոյց տալ, առանց յանձնելու զայն վիրաւորելու մտքով։
[2]) Գութանի եօթր զոյգ ամոլներու և զանոնք վարող հոտաղներու անուններ։